«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում:

Դաստիարակ՝ Ալվարդ Եփրիկյան
Մանկապարտեզ՝ « Քանաքեռավանի մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ……-2-

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……-3-

ԳԼՈՒԽ 1. Տեսական մաս……-5-

Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները ……-5-

Ենթագլուխ 1.1 Ընտանեկան դաստիարակության խնդիրները……-5-

ԳԼՈՒԽ 2.Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության ձևերը……-7-

Ենթագլուխ 2.1 Ընտանիք և մանկապարտեզ կապը……-8-

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ……-9-

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ……-10-

ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԵՏԱ……-14-

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……-16-

ԿԱՐԾԻՔՆԵՐ……-18-

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……-20-

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի բնականոն եւ համակողմանի զարգացման ապահովման գործում մեծ է կրթության դերը:Նախադպրոցական կրթության հիմնական խնդիրներն են երեխայի ֆիզիկական,հոգեկան,բարոյական,մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը նրա ընդունակությունների բացահայտմանն ու բնականոն զարգացմանը նպաստելը,շրջապատի հետ շփման,սեփական կարծիքն արտահայտելու և վարքագիծը կառավարելու տարրական կարողությունների ձեւավորումը,դպրոցական ուսուցմանը երեխային նախապատրաստելը:

Ինչպես ամրագրված է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում,նախադպրոցական կրթության զարգացումն ուղղվելու է համակարգի արդիականացմանը եւ զարգացման նախադրյալների ստեղծամնը:

Ռազմավարական ծրագրի դրույթներում նշված է նախադպրոցական կրթության ոլորտում ՀՀ կառավարության հիմնական նպատակը նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումն է հստակ ուշադրություն դարձնելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթության մեջ ընդգրկման ավելացմանը:

Քանի որ իմ թեման՝ համագործակցությունն էր մանկավարժի ու սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման եւ ընտանեկան դաստիարակության վերաբերյալ,ես որոշեցի տարբեր մանկավարժական գրքերից որոնել և գտնել իմ թեմային համապատասխան տեսարանների գեղեցիկ եւ համընկնող խոսքեր:Օրինակ՝ Տ.Ա. Մարկովայի աշխատանքների մեջ առանձնահատուկ դեր է խաղում ընտանեկան դաստիարակության երեք գործոնները՝ որոնք ես չէի կարողանա չտեսնել:

Մեր մեծ վիպասան Ռաֆֆու խոսքերը երբեք չի ծերանում,այն մնում է միշտ դաստիարակչական եւ խրատական ուժ ընտանիքի ներգործության մեջ. «Ընտանիքը երեխայի մթնոլորտն է» :

Կամ մեծն Յ.Ա. Կոմենսկին շատ յուրահատուկ նշում էր,որ «Մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ…»

Յուրաքանչյուր անհատի ճակատագիր դասավորվում է դեռ մանկուց:Երեխաների դաստիարակության,զարգացման ապագայի ձեւավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը:Մեր աշխատանքի բուն նպատակը ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում:

Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն են կազմում,քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխային ճիշտ զարգացմանը նպաստելը:

Ես իմ առջ և դրել եմ որոշակի նպատակներ:

Թեմայի նպատակն է՝

- Ընտանիքի վերաբերմունքը երեխայի նկատմամբ
- Ընտանիքի շփման մեթոդները
- Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության արդյունավետությունը
- Ընտանիքի վերաբերմունքը երեխայի ինքնուրույնության դրսեւորմանը

Ինձ հետաքրքրում է այս ժամանակի ծնողները՝ օգտվու՞մ են «Քայլ առ քայլի» մեթոդներից:

Գլուխ 1. Տեսական մաս

«Ընտանեկան դաստիրակության առանձնահատկությունները»

Ընտանեկան դաստիարակությունը մանկավարժական համակարգ է՝ ուղղված կրթադաստիարակչական խնդիրների իրականացմանը,ընտանիքի բոլոր անդամների համատեղ մանկավարժական ջանքերի շնորճիվ:Ճիշտ է յուրաքանչյուր ընտանիք ունի դաստիարակության իր սկզբունքներն ու մոտեցումները,սակայն դրանք պետք է պարբերաբար վերանայվեն,ճշտվեն եւ համապատասխանեցվեն ընտաանեկան դաստիարակության մանկավարժորեն ընդունելի պահանջներին:

Տ.Ա. Մարկովան երկար տարիների ուսումնասիրելով ընտանեկան դաստիարակության առավելություններետը,առանձնացնում է ընտանեկան դաստիարակության երեք այն գործոնները,որոնք բնութագրում են ընտանեկան դաստիարակության հիմնական առանձնահատկությունները:

Առաջին առանձնահատկությունը՝ վերաբերում է ընտանեկան դաստիարակության մթնոլորտին:

Ընտանեկան դաստիարակության երկրիրդ առանձնահատկությունը՝ մանկավարժական ներգործության մշտական (տեսական) բնույթն է: Ընտանեկան դաստիարակության երրորդ առավելությունը երեխային՝ ընտանեկան խնդիրների լուծամնը,լիիրավ մասնակից դարձնելու հնարավորությունն է:

Ենթագլուխ 1.1

«Ընտանեկան դաստիարակության խնդիրները»

Ընտանիքը ապահովում է երեխայի հետագա երջանիկ կյանքի համար անհրաժեշտ պայմաններ եւ ձևավորում որոշակի կենսակերպ:Ընտանեկան դաստիարակության միջոցով լուծվում են երեխայի անձնավորության կայացման մի շարք խնդիրներ: Դրանք են.

- ✓ ստեղծվում են երեխայի լիարժեք զարգացման համար բոլոր հնարավոր պայմանները

- ✓ ապահովում երեխայի հոգեբանական պաշտպանվածությունը եւ ձեւավորվում է վստահություն աշխարհի հանդեպ
- ✓ զարգանում է երեխայի ինքնագիտակցությունը, ձեռք է բերվում սեռային պատկանելություն և արժանապատվության զգացողություն
- ✓ ձևավորվում են կյանքի հմտություններ և դրական սովորություններ
- ✓ յուրացվում են սոցիալ-բարոյական արժեքներ, ձևավորվում է կենցաղային մշակույթ
- ✓ փոխանցվում են եւ յուրացվում ընտանեկան փոխհարաբերությունների նմուշներ, ձևավորվում է ընտանիքի պահպանման և դաստիարակության որոշակի օգտակար փորձ:

Նշված խնդիրներից կարևորությունը պահանջում է ընտանեկան դաստիարակության մանկավարժական մոտեցումների հստակեցում եւ հատուկ մշակում:Ընտանեկան դաստիարակության կազմակերպման եղանակների հուշում եւ տարածում ծնողական միջավայրում:

Գլուխ 2

«Ընտանիքի եւ մանկապարտեզի համագործակցության ձեւերը»

Նախադպրոցական տարիքի ետեխաների ներդաշնակ զարգացման գործընթացում առանձնահատուկ կարևորվում է ընտանիքի,նախադպրոցական կրթական հաստատության հաջորդական եւ փոխպայմանավորված մանկավարժական ներգործությունը:

Մանկավարժական աշխատանքների հաջորդականությունն իրականցվում է կրթության բովանդակության փոխանցման և յուրացման աստիճանականության և դաստիարակության գիրծընթացում երեխային ներկայացվող պահանջների միասնականության ճանապարհով:Համագործակցության պայմաններում դրական փոփոխությունների են ենթարկվում «ծնող-երեխա-մանկավարժ» փոխհարաբերությունները,որոնք կրթական գործընթացի խթանման և դրա արդյունավետության հիմանական գործոններից մեկն է:

Կարևոր է,որ մանկապարտեզի և ընտանիքի պահանջները լինեն միասնական: Ընտանիքը հասարակության առաջին սոցիալական օղակն է,ուր դրվում են երեխայի անձնավորության հիմքերը և կառուցվում է նրա սոցիալական կերպարը:

«Ընտանիքը երեխայի մթնոլորտն է,նրա մեջ աճում և զարգանում են երեխայի մտավոր ուժերը,նրա հոգեկան զորությունները և բարոյական հատկությունները,բոլորն այն չափով,ինչ չափով նպաստում է դրան գերդաստանի կրթողական ազդեցությունը և այն ձեւով,ինչ կերպարանք է տալիս նրան դաստիարակող ոգին» (Ռաֆֆի):

Յ.Ա. Կոմենսկին նշում էր,որ «Մայրիկի դասերը չունեն դասամիջոցներ,հանգստյան օրեր,արձակուրդ»:Վերջապես, «Երեխան ընտանիքի հայելին է» սահմանում դարձած արտահայտությունը լիովին նկարագրում է և կարևորում ընտանիքի անփոխարինելի դերը երեխայի զարգացման և նրա անձնավորության ձևավորման գործում:Ընտանիքը այն կայուն սոցիալական օղակն է,որն ուղեկցում և առաջնորդում է երեխային իր ողջ կյանքում:

Մանկապարտեզը և այլ նախադպրոցական կրթական հաստատությունները կոչված են իրականացնելու նախադպրոցական տարիքի երեխաների հասարակական

դաստիարակությունը:Նախադպրոցական կրթօջախների հիմնական մանկավարժական գործառույթը երեխայի դաստիարակության կազմակերպումն է հասակակիցների միջավայրում,նախադպրոցահասակ երեխաների հասարակական կյանքի համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:Մանկապարտեզում է երեխան սկսում հաղորդակցվել և համագործակցել,որոշումներ կայացնել,համադրելով սեփական ցանկություններն ու կարծիքը ընկերների ցանկությունների և կարծիքի հետ:

Ենթագլուխ 2.1

«Ընտանիք եւ մանկապարտեզ կապը»

Ծնողների մանկապարտեզի մանկավարժական աշխանքներին ակտիվ մասնակցությունից շահում են մանկապարտեզի մանկավարժան գործընթացի բոլոր սուբյեկտները:

Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունն օգնում է երկուստեք ճանաչելու և հաշվի առնելու երեխայի դաստիարակության իրական պայմանները՝ այն արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Ծնողների ներկայությունը մանկապարտեզում վստահություն է ներշնչում երեխային և կրկնապատկում նրա սովորելու և աշխարհը ճանաչելու ցանկությունը:Ծնողներն իրենց հերթին ձեռք են բերում չափազանց կարևոր մանկավարժական գիտելիքներ և կարողանում են գնահատել մանկավարժի ծանրագույն աշխատանքը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պետք է կատարել ընտանեկան մթնոլորտի ուսումնասիրություն:Դրա համար պետք է ծնողների հետ կատարել հայտորոշիչ վերլուծական աշխատանք:Բաժանել ծնողների համար նախատեսված հոգեբանական անկետա,որը հնարավորություն է տալիս վեր հանել ընտանիքի ընդհանուր բնութագիրը ,տարիքը,կրթական մակարդակը,տեղեկություններ երեխայի մասին,մանկավարժական մշակույթը,ծնողների հետ հաղորդակցման բնույթը,ծնողների դաստիարակչական ներուժը,նրանց հոգեբանամանկավարժական կոմպետենտը:

Պարապմունք եմ ներկայացնելու «Միջին խմբի» սաների հետ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծնողների համար նախատեսված անկետաները,երբ լրացրած արդեն կարդացի,և ինքս համոզվեցի,որ մեր երիտասարդ ծնողները՝մոտ են կանգնած «Քայլ առ քայլի» մեթոդներին եւ դրա հիման վրա ես սկսեցի իմ հետազոտական աշխատանքը սկսել այդ նույն մեթոդը կիրառելով:

Նախապես խմբասենյակում ստեղծեցի ընտանիք և մանկապարտեզ մթնոլորտը, այսինքն ամբողջ խումբը զարդարեցի իմ խմբի սաների «Միջին խումբ» գեղեցիկ աշխատանքներով,որը կապված էր ընտանիքի հետ:

Մանկապարտեզում երեխաները նկարեցին՝ հետեւյալ նկարները.

- «Իմ մեծ ընտանիքը»
- «Իմ հայրիկը,մայրիկը եւ քույրիկը»
- «Իմ քույրիկը կամ եղբայրը»
- «Իմ տատիկը եւ պապիկը»

Եւ հիշեցին զվարճալի պատմություններ և՛ ընտանիքից, և՛ մանկապարտեզից:

ԹԵՄԱ՝ «Ճանաչիր ընտանիքդ եւ տարբերակիր այն»

Սկսում ենք խաղով.

Խաղ – «Ի՞նչ կա տուփում»

Նախօրոք տուփի մեջ թաքցնում ենք ընտանեկան նկարներ(երեխաների ընտանիքներից):

Տուփը դնում ենք խմբասենյակից դուրս և դրսից մեկը դուռը թակում է,երեխաներից մեկը դուռը բաց է անում և զարմացած տուփը ներս է բերում:

Մեր սաները հերթով թափահարում են,որ գուշակեն ինչ կա այդ տուփում՝

Եվ ահա երեխաներից մեկը ասաց նկար է,անմիջապես բացեցինք ու տեսանք մեր սաների ընտանիքների նկարները:

ՏԵՍԱԿԸ - Զրուց

ՆՊԱՏԱԿԸ - Երեխաների մեջ պատկերացում ձեւավորել. ընտանիքը,որպես միասին նույն տանիքի տակ ապրող հարազատ մարդկանց մասին,դաստիարակել մտերիմների հանդեպ հոգատար վերաբերմունք դրսևորելու ցանկություն:
Զարգացնել կապակցված խոսքը,խրախուսել պարզ ,ընդարձակ և քերականորեն ճիշտ կազմված նախադասություններով հարցերին պատասխանելու երեխաների ջանքը:
Երեխաներին առաջարկել հանելուկներ՝

Ո՞վ է արթուն լինում
Երբ հիվանդ ես լինում: (Մայրը)

Գ. Մովսիսյան

Ու՞մ ժպիտն է կյանք տալիս,
Երբ իր փոքրիկն է լալիս:

Հարստացնել բառապաշարը «ընտանեկան ջերմություն», «մաղթանք», «նկարել մանկապարտեզում ընտանիքի մասին» բառերով և բառակապակցություններով:
Ընթացքում երեխային օգնելու համար տալիս ենք հարցեր:

- Ու՞մ հետ ես ապրում:
- Ո՞վ է ամաենամեծը ձեր ընտանիքում:
- Ո՞վ է ամենափոքրը:
- Դու սիրու՞մ ես քո հարազատներին:
- Ո՞վ է հոգ տանում քո մասին:
- Դու ու՞մ մասին ես հոգ տանում
- Ու՞մ հետ ես սիրում խաղալ տանը
- Ե՞րբ եք բոլորով ուրախանում
- Ի՞նչ եք զգում,երբ հայրիկը անտրամադիր է
- Ի՞նչ եք զգում, երբ մայրիկը,տատիկը պապիկը հիվանդ են:

Այս հարցերի պատասխանը լսելուց հետո վերլուծում ենք ու խաղում:

Խաղ «Ձնագնդի»

Մեկ օր առաջ երեխաները նկարեցին իրենց պատկերացրած ընտանիքը և պատրաստեցին նրանցից ձնագնդիներ՝ պահեցինք տուփի մեջ և այս խաղի ժամանակ առաջ բերեցինք ու սկսեցինք խաղալ թղթի ձնագնդի:

Յուրաքանչյուր երեխա ձեռքում պահեց մեկ թուղթ ձնագնդի,որը պետք է բացի ու իմանա ո՞վ է նկարել այդ նկարը:

Խաղի ավարտից հետո երեխաներին հարցնում ենք «Ի՞նչ ենք մաղթում ձեր ընտանիքներին ու մանկապարտեզին»:

Երեխաները այս հարցին միանգամից պատասխանեցին՝«Մենք ուզում ենք,որ մեր շրջապատում բոլորը լինեն ուրախ»:

Ինձ թվում է,որ մեր սաները ուրախության կարիք շատ ունեն:

Իմ նպատակն է իմանալ ծնողների դաստիարակությունն ու մեթոդները:

Հետազոտական աշխատանքի ավարտին ես հայտնաբերեցի,որ մեր հարգելի ծնողների մեծամասնությունը առաջնորդվում է երեխաների հանդեպ դրական և հոգատար վերաբերմունքով դրսևորված սկզբունքներով.

- Մարդասիրություն և գթասրտություն
- Երեխայի հանդեպ սիրո և հարգանքի
- Երեխայի հետ բաց ու վստահելի հարաբերությունների հաստատման
- Երեխային ընտանիքի գործունեությանն ակտիվ ներգրավելու:

Կցանկանայի նշել,որ շատ հետաքրքիր իրադարձություն տեղի ունեցավ հենց պարապմունքի օրը՝ մեր շատ շնորհալի սաներից մեկի ծննդյան օրն էր, երեխաները շատ զվարճալի ու հետաքրքիր օր անցկացրին,որովհետև խոսեցինք ընտանիքի մասին և փոխկապակցված ընտանիք-մանկապարտեզ փոխգործակցության մասին և նշեցինք կարևոր իրադարձություն:

Եթե երեխան շատ ուրախ է և երջանիկ,որ իր ծննդյան օրը անցկացնում է մանկապարտեզում իր ընկերների ու մեզ հետ,դա կրկնակի ուրախություն է՝թե՛ մեզ,թե՛ծնողի համար: Չէ՞ որ այսօր մեր երեխաները՝ուրախության ուշադրության և

հարգանքի կարիք ունեն:Մենք ուրախ և երջանիկ կլինենք,եթե մեր սաները միշտ լինեն առողջ,ժպտերես և ապրեն միշտ խաղաղ երկնքի տակ:

Կարևոր չէ ընտանիքը մեծ է, թե փոքր,կարևոր է,որ ընտանիքում սեր և համերաշխություն լինի,բոլորը հոգ տանեն,սիրեն և հարգեն իրար:

Եվ այստեղից հետևություն,որ այս թեմայի միջոցով նախադպրոցական կրթության հիմքում ընկած է՝դաստիարակել երեխաներին կիրթ վարքագիծ դրսևորելու ընտանիքի բոլոր անդամների նկատմամբ:Եվ ինչու՞ ոչ նաև մանկապարտեզում,որովհետև մենք փոխկապակցված ենք միմյանց հետ:

ԾՆՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆԿԵՏԱ

1. Երեխայի անվան և ազգանվան առաջին տառերը **Գ. Կ.**

2. Երեխայի ծննդայն օրը,ամիսը, թիվը **12.11.2019թ.**

3. Լրացնողի անվան ազգանվան առաջին տառերը **Մ. Կ.**

4. Ընտանիքի կազմը

Մայր	Հայր	Տատիկ	Պապիկ	Եղբայրներ	Քույրեր
Մարինե	**Արտակ**	**Ռոզա**			**Ռուբինա**

5.Հղիության տնթացքը,առաջացած բարդությունները **Չի եղել**

6. Զարգացումը վաղ տարիքում, երբ է նստել **4 ամսեկան,** քայլել**1 տարեկան** ,խոսել **3-ից**

7.Ի՞նչ հիվանդություններ է տարել երեխան **Ոչ մի**

8.Երեխայի կյանքում եղե՞լ են արդյոք փոփոխություններ,/օրինակ միջավայրի փոփոխություն, հաճախակի կամ երկարատև բաժանումներ ծնողներից կամ այլ դեպքեր՝ **Ոչ**

9. Ո՞վ է խնամել երեխային առաջին երկու տարվա ընթացքում **Մայրը և տատիկը**

10. Երեխան հաճախու՞մ է կամ հաճախե՞լ է մանկապարտեզ, քանի՞ տարեկանից

Այո **3-ից** Ոչ.....

11. Ինչպե՞ս է երեխան վերաբերվում մանկապարտեզ այցելությանը **Շատ դրական**

12. Ի՞նչ բարդություններ են եղել երեխայի վարքում 3 տարեկանում **Ոչ մի**

13.Երեխան դրսևորու՞մ է ինքնուրույնություն,թե ամեն ինչ նրա փոխարեն է արվում **Ինքնուրույն**

14. Ինչո՞վ է սիրում զբաղվել, խաղալ,/համակարգիչ, կոնստուկտոր,հեռուստացույց, տիկնիկներ,**մեքենաներ**,նկարչություն,**փազլ**/

15.Տանը կան արդյո՞ք խաղալիքների համար նախատեսված հատուկ անկյուն **Այո**

16.Ինչպիսի՞ն են հարաբերությունները հասակակիցների հետ **Լավ**

17. Ինչպիսի՞ն են հարաբերությունները ընտանիքի անդամների հետ **Լավ**

18.Համատեղ ի՞նչ գործունեությամբ եք զբաղվում կամ խաղում.....

19.Ընտանիքում կա՞ն հակասություններ երեխայի հանդեպ կիրառվող արգելքների կամ թույլտվությունների վերաբերյալ....Այո.....**Ոչ √**

20. Ինչպե՞ս եք պատժում.....

21. Ինչպե՞ս եք խրախուսում **Գովեստի խոսքեչ, համբուրել,շոյել**

22. Երեխան ի՞նչ խմբակներ է հաճախում **Ոչ մի**

23. Ի՞նչ է երեխայի մոտ առավել հաջող ստացվում

Նկարել	Երգել	Պարել	Սպորտ	Արտասանել	Խաղալ	Այլ
√	√	√			√	

24.Ի՞նչն է ձեզ անհանգստացնում ձեր երեխայի վարքի մեջ

Ագրեսիվություն	Ամաչկոտութուն	Ստախոություն	Գերակտիվություն	Անհանգստություն
Ցուցադրողականություն	Ցրվածություն	Ինքնամփոփություն	Շատախոսություն	Այլ

25.Նկատե՞լ եք վախեր կամ այլ անցանկալի դրսևորումներ ձեր երեխաների վարքում **Ոչ**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվ այսպիսով եզրակացություն՝ ընտանիքի դերը երեխայի զարգացման ու դաստիարակման առաջին օղական է և համագործակցությունն է նախադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքի բնագավառում:

Ես ընտրեցի շրջակա միջավայրի «Ընտանիք և մանկապարտեզ» թեման և պարապունքը ներկայացրի «Ճանաչիր ընտանիքդ և տարբերակիր ընտանեկան կապերը»:

Ծնողները լրացրին հոգեբանական անկետաները՝երեխաները նկարեցին իրենց ընտանիքները ու ներկայացրին շատ հուզական ու ճիշտ: Ինքս համեմատեցի և հասկացա,որ ծնողները առաջնորդվում են այս ժամանակի հետ,այսինքն «Քայլ առ քայլի» մեթոդների նմանեցված տեսակով:

Երեխան կարող է ինքնուրույն մտածել ու արտահայտվել՝ թե՛ մանկապարտեզում, և թե՛ ընտանիքում:

Իմ պարապմունքի ընթացքում ես օգտագործեցի դաստիարակության հետևյալ մեթոդները՝

- ✓ առաջնորդվել
- ✓ սովորեցնել
- ✓ խրախուսել
- ✓ ներառել
- ✓ կազմակերպել
- ✓ հետազոտել
- ✓ եզրակացնել

Այսինքն թողնել երեխան ինքը ընտրի,որպեսզի սիրով լսի ու սովորի,հաշվի առնենք իր կարծիքը:

Օրինակ՝ նկարել է ընտանիք,մենք չենք հասկացել,իսկ եթե հարցնում ենք երեխային «Ի՞նչ ես նկարել» ապա երեխան շատ գեղեցիկ ներկայացնում է:

Եվ այստեղից եզրակացություն,եթե երեխային վստահում ես,որ նա կարող է խրախուսման միջոցով ավելի ակտիվ դրսևորի իրեն տվյալ պարապմունքին,ապա պետք է հաշվի առնել իր կարծիքը: Այսպիսով մենք «Քայլ առ քայլ» գնում ենք առաջ: Միանգամից չսովորեցնել,թողնել երեխան արտահայտվի:

Ընտրել եմ այս հետազոտական աշխատանքը,քանի որ ընտանիքում են դրվում երեխայի վաղ զարմացման հիմքերը:

Ծնողներն են,որ առաջին անգամ երեխային սովորեցնում են կյանքի այբուբենը,ձևավորում նրանց աշխարհընկալումը,բնավորություն գծերը:

Ես կարծում եմ,որ ծնողների հետ հանդիպումը,անկետա լրացնելու համար մեր սաների պահվացքը տանը ինչպիսի՞ն է, հանդիպման ժամանակ ներկայացնել սեփական ոճի վերլուծումը՝ եզրակացություն կազմել իմ վերաբերմունքը իրենց երեխաների հանդեպ:

Տնօրենի և դաստիարակի հիմավոր խոսքերից ենթադրեցի ու վերլուծեցի,որ իրենք հավանություն էին տվել այս իմ ընտրած թեմային և կարևորություն էին տվել ընտանիք-մանկապարտեզ համագործակցութան մեթոդներին:

Երբ տեսա երեխաների պատկերացումով նկարած ընտանիքի նկարները, շատ զարմացա,թե ինչպե՞ս են բացատրում իրենց նկարած աշխատանքները մանրամասն և հասկանալի յուրաքանչյուր գիծ,կետ, շրջան եռանկյունի ի՞նչ է նշանակում:

Հատկապես շատ զվարճալի անցավ «Ձնագնդի» խաղը,նույնիսկ տնօրենը մասնակցեց այս խաղին ու երեխաներին ուրախացրեց տվյալ պահին:Մեծերի հետ խաղը ավելի հետաքրքիր է դառնում և ոգևորում է փոքրիկներին:

Վերլուծելով իմ աշխատանքը կարծում եմ շատ բաներ հասկացա ու սովորեցի այս վերապատրաստման ժամանակ «Քայլ առ քայլ» կհասնենք շատ բարձունքների:Միասին՝ «Ընտանիք»,«Մանկապարտեզ» կարևոր երկու հասկացություն:

ԿԱՐԾԻՔ

29.11.2023թ.հաստատության միջին խմբի դաստիարակ Ալվարդ Եփրիկյանը «Ինձ շրջապատող աշխարհը» առարկայի շրջանակում ներկայացրեց «Ճանաչիր ընտանիքդ եւ տարբերակիր ընտանեկան կապերը» թեման:Կիրառել զանազան դիդակտիկ նյութեր,նկարներ,վարժություններ,որոնք ավելի դյուրին դարձրեցին թեմայի ընկալումը: «Անկետավորման մեթոդի» կիրառմամբ ավելի մեծացավ երեխաների հետաքրքրությունը թեմայի շուրջ,որի շնորհիվ դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակին,այն է՝ թեման յուրացվեց սաների կողմից:

Սաները մեծ ոգևորություն ապրեցին,մեծ ուրախությամբ և խանդավառությամբ մասնակցեցին պարապմունքին և ամենակարևորը մայրիկի մասին խոսելիս՝ բոլորի դեմքին ժպիտ հայտնվեց:

Դաստիարակի հողմից հետազոտվող թեման մեծ կարևորություն ունի նախադպրոցական կրթության մեջ,քանի որ ընտանիքը լինելով հասարակության բջիջը,ամենաառանցքային սոցիալական ինստիտուտներից մեկը,հանդիսանում է զարգացած պետության,առողջ հասարակության հենասյունը:Առողջ ընտանիքներում դաստիարակվող երեխաները պետության լավագույն ապագան կերտողներն են:

Տնօրեն՝ Հ.Մովսիսյան

ԿԱՐԾԻՔ

Միջին խմբի դաստիարակ Ալվարդ Եփրիկյանը ներկայացրեց «Ճանաչիր ընտանիքը եւ տարբերակիր ընտանեկան կապերը» թեման:Պարապմունքը սկսվեց շատ հետաքրքիր անակնկալով,երեխաները մեծ ոգևորությամբ սպասում էին,թե ինչ է լինելու տուփի մեջ:Դաստիարակը պարապմունքի ժամանակ կիրառեց բազմաթիվ դիդակտիկ նյութեր,զարգացրեց երեխաների կապակցված խոսքը:Նա կազմակերպեց խաղեր,որոնք էլ ավելի ակտիվացրեցին երեխաներին:

Դաստիարակի պարապմունքը համալիր էր,քանի որ պարապմունքի ժամանակ երեխաները և՛ նկարեցին,և՛ վերլուծեցին իրենց նկարները և՛ հանելուկների պատասխանեցին:Դաստիարակը աշխատել եր նաև ծնողների հետ:Կիրառել էր «անկետավիրման մեթոդը»,պարզելու համար ծնողների հուզական կապը երեխաների հետ:Ըստ իս, դաստիարակը իր առջև դրված նպատակին կարողացավ հասնել:Նա աշխատել էր և՛ ծնողների, և՛ երեխաների հետ:

Ընտանիքն է սոցիալականացման առաջին օղակը,ուր սկիզբ է առնում երեխայի սոցիալական էությունը:

Ընտանիքն այն կայուն սոցիալական օղակն է,որն ուղեկցում է երեխային ողջ կյանքի ընթացքում:

Եվ շատ կարևոր է մանկապարտեզի և ընտանիքի համագործակցությունը,որպեսզի արդյունավետ կազմակերպեն երեխայի դաստիարակությունը:

Դաստիարակ՝ Ա. Խառատյան

29.11.2023թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական մանկավարժություն Ս.Ա. Մարության,Ս.Մ Դալլաքյան

Նախադպրոցական կրթական հաստատության կապը ընտանիքի հետ - էջ 257-259

Ընտանեկան դաստիարակության առանձնահատկիությունները - էջ 260-263

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության ձևերը - էջ 270